ՆՈՐԱՀԱՅՏ ՎԻՄԱԳՐԵՐ ԳԱՌՆԻԻՑ

ՍՈՒՐԵՆ ՍԱՂՈՒՄՅԱՆ

Հայ ժողովրդի գոյատևության և մշակութային ժառանգության անընդհատությունը հավաստող հուշարձաններով հարուստ բնակավայրերից մեկը Գառնին է։ Համընդհանուր ճանաչման արժանացած հանրահայտ հուշարձաններից բացի, որոշակի հետաքրքրություն ու կարևորություն են ներկայացնում նաև գյուղի պատմական գերեզմանոցները։ Ըստ մեր դիտարկումների V—XVII դդ. Գառնիում թաղումներ են կատարվել ավելի քան տասը տեղ, որը և ուղղակիորեն վկայում է բնակավայրի ընդարձակության և մեծաքանակ բնակչության փաստը։ Բայց մեզ տվյալ դեպքում հետաքրքրում են հինավուրց գերեզմանոցներում, բնակարանների պատերի տակ ու այգիներում «թաքնված» 200 ամբողջական ու թերատված խաչքարերի և բազմաթիվ տապանաքարերի վրա պահպանվող երկուսուկես տասնյակի չափ վիմագիր արձանագրությունները, որոնք չեն արժանացել մասնագետների համակողմանի ուշադրությանը։ 1907 թ. Մոսկվայի կայսերական հնագիտական ընկերության հանձնարարությամբ Վ. Սիսոևը, ստրոգանովյան ուսումնարանի սան Տարագրոսը և Դադյանցը Երևանի նահանգում ուսումնասիրում են մի շարք հուշարձաններ։ Այդ ընթացքում Բաշ Գառնիից հավաքում են 10 արձանագրություն, որոնք ընթերցում-վերծանում է Լազարյան ճեմարանի պրոֆեսոր, հայագետ Քուլուկ Հովհաննիսյանը։ Այդ արձանագրություններից մեկն առնված է գյուղի հարավարևելյան գերեզմանոցի մի խաչքարից, որի մասին խոսք կլինի ստորև։

Գառնիի պեղումներին նվիրված իր աշխատությունում ակադեմիկոս Բ. Առաքելյանը նկարագրել է նաև գյուղի տարածքի բոլոր հուշարձանները, այդ թվում՝ գերեզմանոցները, հրատարակել Կատրանիդե թագուհու 897 թ. արձանագրությունը, մատնանշել չորս այլ խաչքարերի տարեթվերը (1195, 1200, 1291, 1297)[2]։ Գառնիի միջնադարյան հուշարձանների մասին հպանցիկ դիտողություններ են արվել նաև հետագայում[3]։ Իսկ մի քանի այլ արձանագրություններ (թեև ոչ գերեզմանոցներից) պատմագրական ու հնագիտական նյութերի խելամիտ զուգորդությամբ ուշագրավ եզրահանգումների փաստարկներ են ծառայել միջնադարյան գյուղաքաղաքի տնտեսական ու սոցիալական կյանքի պատմության վերհանմանը նվիրված մի հաջողված փորձում[4]։

Ստորև կանդրադառնանք Գառնիի երկու գերեզմանոցներին։ Դրանցից առաջինը, ուր թաղումներ են կատարում մինչև այժմ, ամենարնդարձակն է։ Այն տեղադրված է գյուղի հարավ-տրեելյան եզրի հարթակում, կիսավեր ս. Առաքելոց եկեղեցու հարևանությամբ։ Այստեղ կա շուրջ հարյուր խաչքար, որոնք բոլորն էլ անխտիր տեղահանված և մինչև վերջերս ընկած էին ցաքուցրիվ[5]։

---

1 «Материалы по археологии Кавказа». вып. XIII. М., 1916. с. 32—37.

2 Г. Аракелян. Гарни; I. Ереван, 1951, с. 16—18, 84.

3 *Բ. Ն. Առաքելյան, Գ. Հ. Կարախանյան, Գառնի, III, Երևան, 1962, էջ 30—33։*

4 *Համլետ Պետրոսյան, Գառնիի մի քանի արձանագրությունները պատմա-հնագիտական առումով («Լրաբեր հասարակական գիտությունների», 1982, № 11, էջ 64—74)։*

5 *Հայկական խաչքար-հուշակոթողների հորինվածքի, գեղազարդման, արծարծած գաղափարների, կանգնեցման շարժառիթների հարցերն այսօր էլ ուսումնասիրության ընթացքի մեջ են։ Այս առումով գովելի է հանրապետության Մինիստրների խորհրդին առընթեր պատմության և մշակույթի հուշարձանների պահպանման ու օգտագործման վարչության ցուցաբերած շան-*



Ենթադրվել է, որ այդ խաչքարերը և մի շարք տապանաքարեր հանվել են ամրոցի պարսպապատերից։ Որ արաբները ավերել են ամրոցի որոշ հատվածները՝ վիճարկման ենթակա չէ, բայց դժվար է պնդել, թե դրանից հետո քարերը տեղահանվել-օգտագործվել են իբրև տապանաքարեր, իսկ երկու-երեք հար-

---

քերը՝ կոթողային հուշարձանների վերականգնման գործում։ 1983 թ. հնագետ Ֆ. Մուրադյանի գլխավորությամբ ամբողջովին վերականգնվել են նաև այս գերեզմանոցի խաչքարերը, որի ընթացքում էլ ընդօրինակել ենք դրանց համառոտ արձանագրությունները։

յուր տարի անց, XII—XIV դդ., դրանք մշակվել-դարձվել են խաչքարեր։ Ավելին, կան ուլունքաշար քանդակներով և տաշտակաձև մշակմամբ խաչքարեր, որոնք կարող էին պատկանել միմիայն տաճարին, սակայն դրանք կրում են վաղ շրջանի արձանագրություններ, և բացառվում է նրա որմերից քարեր հանելու հնարավորությունը։ Տաճարի քարերը կարող են օգտագործված լինել նրա կործանումից՝ 1679 թ. հետո։ Գերեզմանոցի հին՝ արևմտյան հատվածում թաղումներ կատարվել են առնվազն IX—XV դդ. և այդ ժամանակ էլ կանգնեցվել են փոքր, պարզունակ և համեմատաբար խոշոր խաչքարեր, որոնք, սակայն, XIX—XX դդ. վերաբնակները տեղահանել և իրենց տապանաքարեր դրել են իրենց ննջեցյալների վրա։ Գերեզմանոցում շատ են տարբեր հուշարձանների պատկանող սրբասաղ երեսապատերը, քիվերը, ստալակտիտներով բեկորները, ճարտարապետական այլևայլ մանրամասները, սակայն, մեր կարծիքով, խաչքարերի մեծ մասի ատաղձը տաճարի և ամրոցի համար շահագործված քարհանքում մնացած թափոններն ու խոտաններն են։ Տաճարի և ամրոցի քարերի տեղաշարժերը կատարվել են հիմնականում 1830—1920 թթ. ընթացքում և պատահական չէ, որ դրանցից չկան գերեզմանոցի հին մասերում, ուր թաղումները կատարվել են մինչև XVIII դարը։

Երկրորդ գերեզմանոցը գտնվում է գյուղի հակառակ ծայրում՝ հյուսիս-արևմտյան եզրի բլրի վրա։ Յավոք, ինչպես անցյալում, այնպես էլ այժմ հանգստարանը յուրացվում է բնակիչների կողմից՝ և անխնա ոչնչացվում են մեր նախնիների խաչքարերն ու տապանաքարերը։ Այս գերեզմանոցը ևս գործել է առաջինի հետ միասին։ Այստեղ չկան ամրոցից կամ այլ հուշարձաններից բերված քարեր, քանի որ այս գերեզմանատանը (գուցե և XIV դ. հետո) թաղումներ չեն կատարվել։

Գառնի գյուղի խաչքարերը արվեստի հրաշագործություններ չլինելով հանդերձ, հետաքրքրական են Գեղարդ-Գողթ-Հավուցթառ-Աղջոց վանքի համանուն կոթողների ավանդույթներին առնչվող ընդհանրություններով և առանձնահատկություններով։ Արժանահիշատակ է այն իրողությունը, որ այստեղի բազմաթիվ խաչքարերի արևմտյան ճակատը բաժանված է շորսական հավասար մասերի և ամեն մի բաժնում քանդակված է մի խաչ, երևույթ, որը նկատվում է միայն Գառնիում և իր մեջ պարունակում է հեռավոր անցյալի քառակող կոթողների հատվածավորման արձագանքը։

Գառնիի խաչքարերի վրա տարածված են խաչակոթունի ելարան աստիճանավոր Գողգոթայի[6] և խաչի հորիզոնական թևատակի երկու փոքր խաչերի հորինվածքը, որը հիմք է հանդիսացել Տիրոջ տանջամահության և փրկագործման նշանակ խաչի, թևատակի խաչ-ավազակների, կոթունի հիմքի Ադամի գլխաքանդակի պատկերագրական սխեմաների տարածմանը միջնադարյան արվեստում, եթե մինչև իսկ մի կողմ թողնենք հեթանոսական աստիճանավոր զիկկուրատի ազդեցությունը Գողգոթայի ձևաստեղծման վրա։ Սակայն այստեղ Գողգոթա—զիկկուրատ—հող հասկացության ոճավորումն է, որից դիթթում է խաչ կենաց ծառը՝ իբրև կյանքի առհավատչյա։ Գրեթե նույն կերպ են մեկնաբանվում նաև խորանի վերից կախված կենսալի նոերի, խաղողաողկույզների ու զարգացման, աճման հատիկասերմերով ճյուղերի մոտիվները, որոնց պատումը հասնում է նոյի ժամանակները՝ դարձյալ կապված հողի և կյանքի լինելիության ուրախալուր առիթին։

Գյուղի հարավ-արևելյան կամ առաջին գերեզմանոցից մեր ժողոված 16 արձանագրությունները (XII—XIV դդ.) ներկայացնում ենք ժամանակագրական հաջորդականությամբ։

---

6 Գողգոթան մարդագլխաձև բլրակ է Երուսաղեմի արևմտյան կողմում, որը վաղնչական ժամանակներից եղել է քաղաքական, գաղափարական հակառակորդների կառափնարան, ուր խաչել են նաև Հիսուսին և երկու ավազակներին։ Ըստ ավանդության՝ այստեղ է թաղված նաև աստվածաստեղծ առաջին մարդու՝ Ադամի գլուխը։



Գերեզմանոցի վաղագույն արձանագրությունը, որը 806 տարվա հնություն ունի վերաբերվում է Բարսեղ քահանային։ Վիմագիրը հարավ-արևմտյան մասի խաչքարերից մեկի վրա է, որի ուղղանկյուն խորանը խաչահատումով բաժանված է չորս մասի, իսկ ամեն մի հատվածում եռատերև թևիկներով խաչեր են։ Խաչքարի ստորին պռնկին արձանագրված է (գծ. 1)՝ ՈՒԷ (1178). ՉԲԱՐՍԵՂ ՔԱՀԱՆԱ / ՅԱՂԱԻԹՍ ՅԻՇԼԵՑԷՔ։

Կանոնական դարձած չափերը լիովին խախտած (86×55×30) գորշ բազալտի խաչքարերից մեկի ուղղանկյուն խորանի խնձորաթևիկ խաչի տակի եռաստիճան Գողգոթայից ցած փորագրված է (գծ. 2)՝ ՈՂԶ (1187)։

Երրորդ արձանագրությունը ևս համառոտ է՝ գրված խաչից ցած, հարթված մակերեսի եզրում (գծ. 3). ՈԽԵ Թ. (1196 թ.)։ Խաչքարը կապտավուն բազալտից է (150×73×20), հարթ խորանը մեկական խաչաքանդակներով կիսված չորս մասի։ Քարակոթողը կիսամշակ է, ներքևի մասում Գառնիի տաճարի քիվերի և առաստաղի ուլունքաշար զարդերն են, իսկ մնացած կողերը անմշակ են։ Քարը նախատեսված տեղում օգտագործվելու դեպքում պետք է կտրվեր կողքերից, որը պարզ նկատվում է, սակայն դա չի արվել, քանի որ խոտանված է եղել (դարերով մնացել է քարհանքում) ու օգտագործվել ավելի ուշ՝ իբրև հուշագրական կոթող։

Կոպտամշակ որձաքարի ուղղանկյուն խորանում, խնձորակներով ավարտվող խաչի հորիզոնական ձախ թևի տակ փորագրված է թիվը, իսկ ներքևում գեղագիր ու հավասարաչափ տառերով՝ ննջեցյալի հիշատակությունը (գծ. 4). ՈԽԶ (1197). /ՆԵՐՍԵՍ ՔԱՀԱՆԱ ⌈ԵԻ⌉ / ՋՀԱ⌈ՅՐ⌉ՅՆ ՅԱՂԱԻ⌈Թ⌉Ս ՅԻՇԵՑԷՔ⌉։ Երկրորդ տողը մասամբ եղծված է և զհայցն ընթերցումը՝ երկմտելի, որը կարող է ունենալ խնդրող իմաստը։

Գերեզմանոցի կենտրոնական մասի խաչքարերից մեկի (110×70×24) արձանագրությունը փորագրված է երեք կողերին։ Կոթողի ուղղանկյուն խորանում խոշոր խաչն է, վերին անկյուններից կախված են կիսամշակ ոստեր, թևատակին փոքր խաչեր են։ Թեև քարը չեշտ և ծակծկված է, տառերը՝ դժվար ընթեռնելի, բայց հիշատակագիրը կարդացվում է անվրեպ (գծ. 5). ՈԾԵ (1206). ԿԱՆԿՆԵՑ/ԱԻ ԽԱՉՍ Ի ԲԱՐԵ/ԽԱԻՍ⌊ՈՒԹԻՒՆ⌋ ՍԻՄԷՈՆԻ։

Մի ուրիշ խաչքար (117×61×29), կանգնեցված գերեզմանոցի հարավարևմտյան մասում, լիովին կրկնում է նախորդի հորինվածքը և անշուշտ նույն վարպետի ձեռակերտն է։ Բազալտե կոթողի ուղղանկյուն խորանի վերին անկյուններում կենտրոնում շրջանակներով եռահատված ոստեր են, ցածում՝ հինգ խորաններ, իսկ քարի եզրակողերին նույն կապգրերով և Ն. Ջ տառերի նմանակմամբ արձանագրված է (գծ. 6)՝ ԿԱՆԿՆԵՑԱԻ ԽԱՉՍ Ի Բ/ԱՐԵԽԱԻՍՈՒԹԻ⌊ՒՆ⌋ ՎԱՐԴԱԳ/ԵՂԻՆ ԵՒ ԽԱԹՈՒՆԿԱՆ[7]։

Գերեզմանոցի կենտրոնական մասի Գեղարդ-հավուցթառյան ոճով նրբաքանդակ խաչքարերից մեկը (165×80×20) ևս ունի համառոտ արձանագրություն՝ վարպետ Իսամի անվանագրությամբ։ Քանի որ մինչև այժմ Գառնիից ոչ մի վարպետի անուն հայտնի չէ, ուստի մեծանում է նման վկայությունների արժեքը։ Գառնին այն կենտրոններից է, ուր հորինվել են քարգործական արվեստի բազմապիսի կոթողներ, ուստի պետք է լինեին նաև տեղացի ճարտարապետներ ու քանդակագործ վարպետներ։ Տեղի կարմրավուն, համեմատաբար դյուրամշակ քարը հնարավորություն է ընձեռել Իսամին նրբորեն, դասական ավանդույթներով քանդակապատելու խաչքարը։ Խորանում գեղաքանդակ խաչն է, վերից կախված են զանգակածաղկավոր ոստեր, ներքևում կան ականթաճյուղեր, իսկ շրջագծի տեղում՝ միմյանց կցված զանգակածաղիկներ ու բուսաշրջանակներ։ Կողերին հյուսկեն-խաչվող և օղաշղթայաձև զարդեր են։ Ձախ կողի զարդամոտիվը շարունակվում է քիվի վրա իբրև մանրանկարային բուսազարդ։ Խաչի վերին թևատակից դուրս եկող բուսազարդը շեշտում է նրա նախնական իմաստը։ Խաչաքիվի հինգ խորանիկների կամարիկների միջև և չորրորդ խորանի խաչից ներքև արձանագրված է (գծ. 7). Ի- Թ. ՈԿԷ (1218)։ / Տ⌈Է⌉Ր / Յ⌈ԻՍՈՒ⌉Ս/, ԻՍ/ԱՄ։

Գերեզմանոցի աչքի ընկնող խաչքարերից մեկի (166×81×26) վերնամասը եռանիստ է, որի խորանի վերին անկյուններում հյուսթալի նռներ են, կողերին՝ ոճավորված կենաց ծառեր։ Հյուսիսային նեղ կողի 12 տողանոց արձանագրության տառերը կիսամշակ են, չունեն նվազագույն խորություն և հազիվ են նշմարվում։ Արձանագրության վերջը լրացնելով տարածված բանաձևով, ստանում ենք հետևյալ պատկերը (գծ. 8). Ի ՈՀԲ (1223). /ԿԱՆ/ԳՆ/ԵՑ/ԱԻ

---

7 Անցյալում հրատարակված միակ արձանագրությունն է, ուր Վարդագեղը ընթերցվել է Ջարգաղես՝ Վ-ն շփոթելով Ջ-ի, Դ-ն՝ Գ-ի, Գ-ն՝ Դ-ի, Լ-ն՝ Ս-ի հետ (տե՛ս «Материалы по археологии Кавказа», вып. XIII, с. 34).





ՍՐՈՒՐԴԲ Խ/ԱՅՉՍ Ի Բ/ԱՐԷԽԱԻՍ/ՈՒՐԹԻՒՆԴ ԻՒԱՆ/ԵԻ ԵՒ ՋԱՒ/ԱԿԱՑ ԻՒՐ/ՈՑ ԵՒ ԱՄ/ՈՒՍՆՈՑ/ ԻՒՐՈՑ/. ՈՐՔ ⌊ԿԱՐԴԱՔ ՅԻՇԵՑԷՔ Ի ՔՐԻՍՏՈՍ⌋[8]*։*

Գերեզմանոցի հարավ-արևմտյան մասի երկատված խաչքարերից մեկը սոսնձով միացվել և բերվել է կանոնավոր տեսքի (180×87×25)։ Քիվին բուսական, կողերին՝ հյուսկեն շրջաքանդակներ են, մակերեսի հավասար խորանում՝ եռատերև խաչաքանդակ՝ վերնամասից կախված ոստերով։ Ստորին ցանցկեն շրջագոտի տակ տարեթիվն է, իսկ հարավային նեղ կողին հիմնական,

8 Նախավերջին բառը փորագրված է ԻՄՈՑ, սակայն այն ուղղում ենք ԻՒՐՈՑ, նկատի ունենալով, որ խաչքարը կանգնեցվել է Իվանեի, իր զավակների և յուր կնոջ հիշատակին. այլ անձինք չեն մատնանշվում։

տառանց որևէ կապգրի արձանագրությունը (գծ. 9). ԹՎ/ՈՀ/Դ (1225). ԱՅՍ Է ԱՐ/ՁԱՆ Ա /...:/ՐՍՈՒՐԲՂ ՆՇԱ/Ն ԿԱՆԳ/ՆԵԱԼ Տ/ԵԱՌ/ՅՆ /ԱՍՏՈՒԾՈ/Յ ԲԱՐԷ-/ԽԱՒՍ Հ/ԱՒՈՑ/ԻՆ/ ԵՒ ՇԱՏԼ/ՈՅՍԻՆ. Ջ/ԱՇԽԱ/ՏՈՂՔ Ց/ԻՇԷՑԷՂՔ։

Հաջորդ՝ մեկ մետրից մի փոքր բարձր, բազալտե խաչքարի քիվին չորս փոքր խաչեր են, ուղղանկյուն խորանում մեծ խաչ՝ Գողգոթայի և ոստերի ներքևում երկու փոքր խաչերի հորինվածքով։ Գողգոթայի վերին երկու անկյուններում փորագրված է (գծ. 10). ԹՎ ՈՂԴ (1245)։

Գառնիի մեծ գերեզմանոցում կան մի քանի արձանագրություններ ես, որոնք թեև թվագրված չեն, սակայն ժամանակով հեռու չեն թվագրվածներից։ Կարմրավուն գրանիտե խաչքարերից մեկի քիվին և ուղղանկյուն խորանում քանդակված են ութ խաչեր, որոնց տակ, բավական անվարժ տառերով, փորագրված է (գծ. 11). ՋԳԱԳԱՅՏԻ/ՈՍ ԱՂԱՒԹ/Ս/! ՅԻՇ/ԵՑԷՔ; ԱՐՍՏՈՒԱԾ ՁԵԶ ՅԻՇԵ։ Գրերը հարազատ են XII—XIII դդ., իսկ Գագայտիոս անձնանունը խիստ օտարոտի է, թեև տառաշարքն ընթերցվում է հստակ։ Հարկ չկա այստեղ երկու անուն որոնել (Գագ, Այտիոս), քանզի աղոթքում մեկ ննջեցյալի հիշելու պատվիրան է տրված։

Անդամահատված բարձրարժեք խաչքարերից մեկի երկու կտորները միացվել են իրար, որի կողերին հյուսկեն զարդեր են, խորանի վերևում՝ ճյուղաոստեր, ներքևում՝ խոշոր շրջագունդ։ Կենտրոնական խաչի թևատակի փոքր խաչերի միջև գեղեցիկ ու կանոնավոր տառերով գրված է (գծ. 12). ՊՈՒՂՈՂՍ, որին համարում ենք XIII դ. Գառնիում գործող քարագործ արվեստագետ։

Գերեզմանոցի բազալտե հարթ սալատապաններից մեկի վրա փորագրըված է ժամանակագրական առումով XIII—XIV դդ. վերաբերվող, սակայն արտաքնապես ուշ ժամանակի տպավորություն թողնող հետևյալ տապանագիրը (գծ. 13). Ա/ ՍՏՈՒԱ/Ծ ՈՂՈՐՄԻ ՅԷՍԹ/ԵՐԱ/։

Իբրև տապանաքար գործածված ճարտարապետական մանրամասներից մեկի վրա երկարավուն, գեղագիր տառերով գրված է (գծ. 14). ԱՐՋԵՐ Ք/ԱՐԱ-ԳՈՐԾ։ Թվում է արձանագրությունն ամբողջական է և տրամաբանական կլիներ Արջերին վերագրել նույն գերեզմանոցի արևմտյան եզրի 1679 թ. երկրաշարժից ավերված եկեղեցու և հյուսիսից նրան կից մատուռի ճարտարապետի պատիվը։ Սակայն եկեղեցին շարված է կարմրադեղնավուն քարով, իսկ քարգործի անվանակիր բեկորը կապտավուն սրբատաշ բազալտ է՝ երեք կողմից կիսակլոր սյունիկներով, որպիսիք հանդիպում են ինչպես եկեղեցիների, այնպես էլ որմնափակ խաչերի վրա։ Քարի գույնից և մշակման տեխնիկայից ելնելով, այն կարելի է վերագրել Մաշտոց հայրապետ (Ս. Աստվածածին) անվանյալ եկեղեցուն և Արջերին համարել այդ կենտրոնագմբեթ հորինվածքի ճարտարապետը, որը ապրած պետք է լինի XIII—XIV դդ.։

Գերեզմանատան վերոհիշյալ եկեղեցու և կից մատուռի երեսակալ քարերը գրեթե ամբողջովին հանված են[9], բայց հյուսիսային պատի քարերից մեկի վրա պահպանվում է XIII դ. մի արձանագրության կեսը։ Այն հրատարակվել է բնագրից նշանակալի շեղումներով[10], ուստի հարկ ենք համարում վերահրատարակել շտկումներով ու լրացումներով։ Արձանագրության երկրորդ տողի պակասը ինքնին հուշում է, որ առաջին տողը ևս թերի է։ Հետևաբար, առաջարկում ենք առաջին տողը լրացնել ԵՒ ԱՄՈՒՍԻՆ ԻՄ ՄԱՐԻԱՆ նախադասությամբ, ենթադրելով, որ վերջին տողում մեկ պատարագ ստացող Մարիանը ինչ-որ կապ պիտի ունենար առաջին տողում հանդես եկող Խաչատուրի հետ։ Եթե նկատի ունենանք, որ հայ վիմագրերը հիմնականում հավասարատող են, ուստի երկրորդ տողի պական էլ լրացնելով համապատասխանաբար և են-

9 Տեղացիների վկայությամբ եկեղեցին նվիրված է Պողոս-Պետրոս առաքյալներին։ Ամբողջովին պոկոտված են հուշարձանի արևելյան, հարավային և արևմտյան պատերի երեսպատ քարերը, ուր սովորաբար վիմագրվում էին կառուցողական, նվիրատվական և այլ բնույթի արձանագրությունները։

10 «Материалы по археологии Кавказа», вып. XIII, с .34.

թադրելով, որ այդ մասում սպասելի կլիներ նվեր ստացող հաստատության անվանումը (սուրբ ուխտիս, սուրբ եկեղեցուս, սուրբ Առաքելոցս) և նվերը բնորոշող որոշյալի կիրառությունը (մեր այգին, հայրենի այգին, գանձագին այգին), վերականգնում ենք ...ԱՔ ՍՈՒՐԲ ԱՌԱՔԵԼՈՅՍ ԵՒ ՏՈՒԱՔ Ա.... տառադարձմամբ։ Երրորդ տողի վերջնամասում ենթադրելի է մեկական պատարագների հաստատում-սահմանումը խաչատուրի և ամիր Սարգսի համար որոշյալ տոնին (ծառգարդարի, հոգեգալստի, ծառազատկի...) կամ առանց դրա, իսկ չորրորդ տողը ամբողջացնում ենք վիմագրության մեջ տարածված ամենահամառոտ բանաձևով։ Նման հնարավոր միջամտությունից հետո, հաշվի առնելով նաև թույլատրելի սղումներն ու կապգրումը, արձանագրությունն «ամբողջացնում» ենք հետևյալ ձևով (գծ. 15).

1. ԿԱՄԱԻՆ ԱՐՍՏՈՒՇՈՅ ԵՍ՝ ԽԱՉԱՏՈՒՐ ՐԵԻ ԿՈՂԱԿԻՑ ԻՄ ՄԱՐԻԱՆ
2. ԵՒ ԱՄԻՐ ՍԱՐԳԻՍ ՄԻԱԲԱՆԵՑՐԱՔ ՍՈՒՐԲ ԱՌԱՔԵԼՈՅՍ ԵՒ ՏՈՒԱՔ Ա.
3. ՅԳԻՆ Ի ԽԱԿԱՆԱՅՁՈՐ. ՄԻԱԲԱՆ ՐՔՍ ՍԱՀՄԱՆԵՑԻՆ Ա ԺԱՄ ԻՆՁ, Ա ՍԱՐԳԻՍԻՆ.
4. Ա ՄԱՐԻԱՆԻՆ. ԿԱՏԱՐԻՉՔՆ ՐԱՒՐՀՆԻՆ Ի ՏԵԱՌՆԷՆ։

Այսպիսով, ստացվում է, որ Խաչատուրը, Մարիանը (Մարիամ) և ամիր Սարգիսը (որոնց ով լինելը չկարողացանք պարզել) միաբանել են եկեղեցուն ու նրան նվիրել խականձորի (թերևս խաղողաձորի) այգին՝ դրա դիմաց ստանալով մեկական ժամ պատարագ։ Այս հուշարձանի քանդված քարերի արանքից հանված, կիսաջարդ երկու երեսակալի վրա մնում է XIV դ. բնորոշ տառերով, առանձնապես ոչինչ չասող և վերապահությամբ կարդացվող արձանագրության վերջը (գծ. 16). ԻՄ ՈՐԻ.../...ՐԴԱ ԴԱՐԵՑԱՔ։

Երկրորդ գերեզմանոցի արևմտյան եզրում, երկաստիճան պատվանդանին հանդիսավոր կանգնած խաչքարի ստորին մասում ննջեցյալի հիշատակագիրն է, գրանցից վեր՝ բազմաստիճան զիկկուրատ-Գողգոթան, իսկ համակ մակերեսը խաչող դոտիներով առաջացած չորս քառանկյուններից յուրաքանչյուրի մեջ եռատերև թևիկներով մեկական խաչեր։ Ըստ արձանագրության (գծ. 17). ԹՎԱԿ. ՀԱՈՅ /ՈԽԴ (1195). ԱՐՍՏՈՒԱՆԾ ՈՂՈՐՄԻ/ ՊԱՏՐՈՆ ՍԱՐՔԻԼՆ[11] բովանդակության խաչքարի հովանու տակ, մեր կարծիքով, հանդչում է թուրքսելջուկներից երկիրն ազատագրելուց հետո նշանակված գյուղաքաղաքի պատրոնը՝ վարչական ու իրավական կառավարիչը։

Պատրոն Սարգսի խնամքով մշակված կոթողից ոչ հեռու, պատվանդանին ադուցված խաչաբեկորի ստորին մասում պահպանվում է (գծ. 18). ԹՈՒ.ՈԿԵ (1216)։

Գերեզմանոցի թվակիր հաջորդ արձանագրությունը երկու կտորից պատրաստված գորշ բազալտե, սովորական չափերի սալատապանի վրա է (գծ. 19). Ի ՈՂ (1241) ԹՈՒ./ ՅԱՒՈՒՐ/ ԹԱՂՄԱՆ/ ՔՐԻՍՏՈՍԻ ԹԱՂԵՑ/ԱՒ ԸՆԴ ՆՄԱՅ։ ՍԱՐԳԻՍ /ՔԱՀԱՆԱՐ ԵՐԻՑԱՍԱ/ՐԴ ՀԱՍԱԿ/ԱՒ. ԱՂԱՉ/ԵՄ ՅԻՇ/ԵԼ Ի ՏՐԷՆՐ։ Ինչպես պարզվում է, երիտասարդ Սարգիս քահանայի մահը զուգադիպել է Քրիստոսի թաղման տարելիցին, այսինքն՝ 1241 թ. մարտի 27-ին։ Հայոց վիմագրերում սակավադեպ երևույթ է ամսաթվի օգտագործումը՝ այն էլ վաղ շրջանում։ Այդ երևույթը նկատվում է XVI դ., ավելի հաճախ Մայր երկրից դուրս (Ղրիմ)։ Ուշադրավ է, որ այս եզակի դեպքը միանգամայն ստույգ է, քանի որ ըստ տոմարական հաշվումների[12] 1241 թ. մարտի (Արեգի) 27-ը իսկապես հրաշափառ ուրբաթն է, այսինքն՝ Քրիստոսի թաղման օրը։

Վերջին թվակիր հիշատակությունը գերեզմանոցի ծայր արևելյան եզրի հարթ սալատապանաքարերից մեկի վրա է (գծ. 20). Է Ճ (7×100=1251)./ ԳՈՐԷՍ։ Մեզանում թվագրման այս ձևը հաճախ է հանդիպում, իսկ անձնանունը, հավանաբար, Գրիգորիսի տեղայնացված կրճատ ձևն է։

---

11 Արձանագրության մասին հիշատակված է «Գառնի», III, էջ 32։

12 Բ. Թումանյան, Առձեռն տոմարացույց, Երևան, 1965, էջ 34։

Գերեզմանոցի կենտրոնում, իրար կից միակտոր երկու պատվանդաններից հյուսիսայինի վրա, պահպանվում է մուգ բազալտի խաչքար։ Գրեթե ողջ մակերեսը բռնող ուղղանկյուն խորանում խիստ լայն թևերով, եռատերև խաչաքանդակն է։ Հորիզոնական թևերի վերին և ներքին խաչիկներից դատ այլ զարդեր չկան։ Խաչքարերը կանգնեցվել են միաժամանակ (այժմ հարավայինը գոյություն չունի), ուստի և արձանագրությունը փորագրվել է երկու պատվանդաններին, առանց տողատման (գծ. 21). ԵՍ ԾԻՏԵՂՍ ԿԱԿՆԵՑԻ ՁԽԱՁՍ ԲԱՐԷ/ԽԱԻՍ ԻՆՁ ԵՒ ԾՆՈՂԱՑ ԻՄՈՑ ԵՒ Ե/ՂԲԱՐՑ, ՈՐՔ ԵՐԿՐՊԱԳԷՔ ՅԻՇԵՑԷՔ/ Ի ՔՐԻՍՏՈՅՍ։ Այստեղ Ծիտեղ տնձնանունը մեզ հայտնի միակ դեպքն է, որն ավանդված է XIII դարից։

Գերեզմանոցի արևելյան ծայրի բլրին կան երկատված ու սմբողջական խաչքարեր, կիսաթաղ տապանաքարեր, որոնցից մի քանիսն ունեն XIII դ. հիշատակագրություններ։ Դրանցից մեկը խաչաբեկոր է, խաչի վերին ձախ թևվիկով, քիվատակի պարանահյուս խաչերով ու հյուսկեն քանդակներով. քիվի հստակ, գեղեցիկ գրերով (գծ. 22). ԱԼՍՏՈՒԱՅԾ ՈՂՈՐՄԻ ԱՍԵԼԻՆ։ Առաջինից ոչ հեռու, գորշավուն հարթ սալի վրա, ուղղագիծ երկաթագրով փորագրված է (գծ. 23). ԱՐՍՏՈՒԱՆԾ ՈՂՈՐՄԻ ՊՈՌՇԱՑ։ Կողերին կիսասյուներով, վերից կամարաղեղով, ատամնավոր քանդակով բազալտե տապանաքարին (գծ. 24). ԱՐՍՏՈՒԱՆԾ ՈՂՈՐՄԵԱ ՊԱՏՐԿԱՆ։ Վերջինիս մոտ, նույնաձև մշակված տապանաքարին, խորաքանդակ տառերով գրված է (գծ. 25). ԱԼՍՏՈՒԱՅԾ ՈՂՈՐՄԵԱ ԿՏԻՆ։

Հիմնականում սրանք են Գառնիի երկու խոշոր գերեզմանոցների մեջ հայտնի վիմագիր արձանագրությունները։ Սակայն ներկայացնում ենք մի արձանագրություն ևս, որը թեև հրատարակվել է անցյալում[13] ԵՍ ՎԱՐԴՍ ԿԱՆԳՆԵՑԻ ձևով, բայց առաջարկում ենք մեր ընթերցումը։ Խաչքարը դիմահայաց է գյուղի հյուսիս-արևելյան բարձունքի բնակարանների արանքում խեղդված, ավերված մատուռի (կույս Մարմառ՝ ըստ տեղացիների) հյուսիսային պատի մնացորդներին։ Դա երբեմնի ընդարձակ գերեզմանոցի կոթողներից մեկն է։ Խաչքարը մշակված է ճաշակով ու վարպետորեն. լայն քիվի կողերի 5-ական քառանկյունիներում երկրաչափական հյուսաքանդակներ են, խորանում՝ հրմատհյուս, եռատերև թևավարտներով, մոմածխից մրոտված խոշոր խաչը, խորանի վերին անկյունից կախված են փարթամ բուսաճյուղեր, իսկ դեպի վեր ձգվող ստորին բուսաղարդերն ավարտվում են փոքր խաչերով։ Փոքր խաչերի միջև և կոթողի ներքին շրթին արձանագրված է (գծ. 26). ԳՐ/ԻԳ/ՈՐ։ ՈԿ/Գ (1214)։ ....ԵՍ ՎԱՐԴԼ ԱՅՆՍ ԿԱՆԳՆԵՑԻ ԼԶԽԱՁՍ։ Գրիգորին համարում ենք խաչքարի վարպետը, իսկ թվի աջակողմյան տառաշարքը չի մեկնվում և առհասարակ տեղի մթության ու խաչքարի անհաջող դիրքի հետևանքով գրերը լավ չեն ընթերցվում։

Ներկայացվող արձանագրությունները թեև չեն բացահայտում գյուղաքաղաքի լայնահունչ կյանքի պատմության տարբեր ոլորտները, սակայն, այնուամենայնիվ, լրացուցիչ նյութ են պարունակում ուղղակիորեն ժամանակագրության, բնակչության սոցիալական կազմի, քարագործական արվեստի, փոխադրությունների, տեղական խոսվածքի վերաբերյալ։ Իսկ նորահայտ Արջեր, Իսամ, Պողոս և Գրիգոր արվեստագետները պետք է արժանի տեղ ստանան միջնադարյան հայ անվանի քարագործ վարպետների շարքում։

---

13 «Գառնի», III, էջ 32։

НОВОНАЙДЕННЫЕ ЭПИГРАФИЧЕСКИЕ НАДПИСИ ИЗ ГАРНИ

СУРЕН САГУМЯН

Резюме

Исторические кладбища, расположенные на юго-восточном и северо-западном окраинах Гарни, представляют определённый интерес для освещения некоторых вопросов средневековой истории посёлка. Сохранившиеся многочисленные хачкары Гарни представляют большой интерес с точки зрения преемственности традиций памятников Гехарда, Гохта, Авуцтара, при этом они отличаются и определенными особенностями.

Примечательны сохранившиеся на хачкарах и надгробных камнях 26 надписей, которые вводятся в научный оборот впервые. Они представляют определённый интерес для изучения социальной истории, ремесленной жизни, взаимовлияний, языковых особенностей и других вопросов истории посёлка в XII—XIV вв. Достойны упоминания и выявленные имена мастеров резьбы по камню— Арчара, Исама, Погоса, Григора, работы которых заслуживают высокой оценки наряду с аналогичными произведениями других мастеров XII—XIII веков.